



შფანაბისა და გამომცდების
ეროვნული ცენტრი

Քաղաքացիական կրթության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք առաջադրանքների հրահանգներին, ճիշտ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև պատասխանեք հարցերին:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 5 ժամ

Մաղթում ենք հաջողություն:



Հրահանգ

➤ Առաջադրանք՝ ընտրովի պատասխաններով (№1-13, 21.1, 25.1-25.3)

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Պատասխանների թերթիկի վրա, ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում, դրեք **X** նշանը: Ոչ մի այլ նշում չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել նշված պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք **X** նշանը և այնուհետև նշեք պատասխանի նոր տարբերակը: Ուղղած պատասխանը կրկին անգամ հնարավոր չէ ընտրել: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

1. Վրաստանի Սահմանադրության համաձայն², ո՞ր սկզբունքների հիման վրա են վարում դատական գործերը:

ա) Հավասարության և մրցության,

ծ) Վաստակի և ճանաչման,

ճ) Հիերարխիայի և արտոնության,

դ) Թափանցիկության և համերաշխության:

2. Կոնֆլիկտային իրավիճակում վարքի ո՞ր ուղղմանն է բնորոշ ինչպես ասերտիվության, այնպես էլ գործընկերության ցածր մակարդակը:

ա) Համակերպում,

ծ) Խուսափում,

ճ) Մրցակցություն,

զ) Համագործակցություն:

- 3.** Վրաստանի սահմանադրության համաձայն, որը չի համարվում մունիցիպալիտետի սակրեբուլոյի (շրջանային ժողով) անդամների պարտականությունը:
- ա) Պահպանել Վրաստանի սահմանադրությունն ու օրենքը,
 - ծ) Հանդիպել քաղաքացիներին մունիցիպալիտետի սակրեբուլոյի կանոնակարգով սահմանված կանոնների համաձայն,
 - զ) Ներկայացնել առաջարկություն մունիցիպալիտետի սակրեբուլոյի վարչական-իրավական ակտ հրապարակելու մասին,
 - զ) Մասնակցել մունիցիպալիտետի սակրեբուլոյի նիստերին և մունիցիպալիտետի սակրեբուլոյի հանձնաժողովների աշխատանքներին:

4. Ո՞ր պարզաբանումը չի համապատասխանում սոցիալիզացիայի հասկացության իմաստին:

- ա) Հասարակական վարքի մոդելների և համակեցության համար անհրաժեշտ ունակությունների ուսումնառություն,
- բ) Մշակույթի հետ կապված արժեքների և հայացքների ուսումնասիրություն,
- գ) Որոշակի սոցիալական դերերի յուրացում և հարմարեցում,
- դ) Հասարակության կողմից մարդու մարզինալացում:

5. Վրաստանի Օրենսդրության համաձայն, որ իրավունքից չեն օգտվում Վրաստանում բնակվող օտարերկրյա քաղաքացիները:

ս) Ազատ տեղաշարժվելու և բնակավայրի ազատ ընտրության,

ծ) Անձնական, գույքային և մյուս իրավունքները պաշտպանելու համար դատարան և այլ պետական մարմիններին դիմելու, անկախ իրենց իրավական վիճակից,

զ) Վրաստանում գործող քաղաքական միավորումներին անդամակցելու և դրանց գործունեությանը մասնակցություն ցուցաբերելու,

զ) Վրաստանի քաղաքացիների նման մշակութային արժեքներից օգտվելու:

6. Սահմանադրության մասին դատողություններից, ո՞րն է ճիշտ:


ս) Սահմանադրությունը, որպես պետության հիմնական օրենք, ժամանակակից նշանակությունը ձեռք է բերել XVII դարում և այսօրվա դրությամբ այն բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող փաստաթուղթ է հանդիսանում:

ծ) Սահմանադրությունն ընդունվում է փոքրաքանակ արտոնյալ սոցիալական խմբերի բարեկեցության համար և մյուս ցանկացած օրենքները պետք է ընդունվեն սահմանադրությանը համապատասխան:

զ) Սահմանադրությունը ենթաօրենսդրական իրավական ակտ է, որը սահմանում է նախարարական կաբինետը՝ նախագահի կարգադրությամբ:

զ) Սահմանադրությունը ոչ նորմատիվ իրավական ակտ է, որը բաշխված է դասակարգումների տարբեր նշաններով՝ ձևի, գործողության ժամկետի, փոփոխություններ մտցնելու առումով և այլն:

7. Միեմայում պատկերված է քաղաքական կողմնացույց, համապատասխան քաղաքական գործիչներով և գաղափարախոսական ուղղություններով: Ո՞ր քաղաքական գործիչն է համապատասխանում սիեմայում ներկայացված հարցական նշանին:



- ա) Ռոլանդ Ռեյգան,
- բ) Ֆիդել Կաստրո,
- գ) Մահաթմա Գանդի,
- դ) Մաո Ցզե Դուն:

8. Ինչպե՞ս է կոչվում քաղաքական համակարգը, որտեղ անհատներն իրենց տաղանդի և ջանքեր գործադրելու հիման վրա քաղաքականության ոլորտում ձեռք են բերում կարիերայի առաջընթաց:

ս) Օիլոկրատիա,

ծ) Մերիտոկրատիա,

ճ) Արիստոկրատիա,

զ) Ավտոկրատիա:

9. Ո՞ր պատմական իրադարձությունն է ներկայացնում մարդասիրական միջամտության օրինակ:
- ս) 2014 թվականից սկսած միջազգային ռազմական ինտերվենցիան Իրաքի և Լևանտի իսլամական պետության դեմ,
 - ծ) Ռուսաստանի Դաշնության կողմից Ղրիմի բռնակցումը (անեքսիա) 2014 թվականին,
 - ճ) 1939 – 1945 թավականներին Գերմանիայի կողմից Չեխոսլովակիայի տարածքների գրավումը,
 - Ճ) Սիրիայում 2011 թվականից սկսած քաղաքացիական պատերազմը, որի հետևանքով միլիոնավոր մարդիկ ենթարկվեցին բռնի տեղահանման և ստիպված էին լքել երկիրը:

10. Ո՞ր պարզաբանումն է համապատասխանում արմատականության (ֆունդամենտալիզմ) հասկացությանը:

ս) Անարխիստական ուսմունք, որի հիմնական սկզբունքը պետության միասնությունը խթանել և միևնույն ժամանակ, մշակութային բազմազանությունը պահպանելն է:

ծ) Կրոնական պահպանողականության ձև, որը մարդուց պահանջում է անվերապահորեն կատարել կրոնական պատվիրանները և առանձնանում է տարբեր կրոններ դավանող մարդկանց նկատմամբ անհանդուրժողականությամբ:

զ) Քաղաքացիական ազգայնականության ձև, որն առանձնահատուկ նշանակություն է տալիս էթնիկ տարբերակվածությանը և ամեն կերպ ձգտում է պահպանել այն:

զ) Հասարակական-քաղաքական կարգի հիմնական սկզբունք, որն ընդունում և նպաստում է բազմերանգ տեսակետերի և դիրքորոշումների համագոյակցությանը:

11. Ո՞ր դատողությունն է ճիշտ փոխանցում անթրոպոցենտրիզմի հասկացության իմաստը:


ս) Աստծո ստեղծած արարածներից մարդը բարոյական արժանիքներով օժտված միակ արարածն է, այդ իսկ պատճառով նա իրավունք չունի օգտագործել մյուս արարածներին, որպես միջոց:

ծ) Բնության մեջ չկան հիերարխիաներ, հետևաբար բոլոր արարածները հավասարապես արժեքավոր են և մարդուց պահանջվում է պահպանել այդ հավասարությունը:

ճ) Աշխարհի կենտրոնում կանգնած է մարդը, իսկ բոլոր մյուս արարածները բնության մեջ մարդկային նպատակների իրականացման միջոց են համարվում:

Ճ) Մարդկային արժեքների կենտրոնում ընկած է բնության մասին հոգատարությունն ու էկոլոգիական բալանսի պահպանումը, ինչը խոսում է էվոլյուցիոն զարգացման բարձր աստիճանի մասին:

12. Դիագրամն արտացոլում է Վրաստանի քաղաքացիների 2018 թվականի զբաղվածության ոլորտի վիճակագրությունը («Սաքստատ»).



Ո՞ր դատողությունն է համապատասխանում դիագրամի տվյալներին:

- ա) Տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում մեծամասնությունը կանայք են,
- բ) Ինչպես գործազուրկ, այնպեսև զբաղված բնակչության շրջանում մեծամասնությունը տղամարդիկ են,
- գ) Ինչպես զբաղված կանանց, այնպեսև զբաղված տղամարդկանց շրջանում, կեսից ավելին ինքնազբաղ են,
- դ) 2014 թվականից մինչև 2018 թվականը զբաղված տղամարդկանց թիվը փոքր ինչ աճել է, իսկ զբաղված կանանց թիվը փոքր ինչ նվազել:

13. Առաջադրանքում տրված է սահմանափակ կարողություններով անձանց 2014 թվականի զբաղվածության ոլորտի վիճակագրությունը Վրաստանում:

- Վրաստանում զբաղված սահմանափակ կարողություններով անձանց 86,2%-ը համարվում է ինքնազբաղ, իսկ համանման ցուցանիշը մյուս բնակչության շրջանում կազմում է 53,6%:
- Վրաստանում սահմանափակ կարողություններով 96,102 անձանցից 4,571-ը համարվում են վարձու աշխատողներ, ինչ կազմում է զբաղված սահմանափակ կարողություններով անձանց 13.8%-ը:
- Եվրոպական երկրներում սահմանափակ կարողություններով անձանց վարձու աշխատանքով զբաղվածության միջին ցուցանիշը կազմում է 33,6%:

Տվյալների հիման վրա կայացված ո՞ր եզրահանգումն է ճիշտ:

ա) Վրաստանում ինքնազբաղ սահմանափակ կարողություններով անձանց տոկոսային ցուցանիշն ավելի ցածր է, քան եվրոպական երկրներում:

բ) Վրաստանում սահմանափակ կարողություններով անձինք ունեն վարձու աշխատանքով զբաղվելու նույն հնարավորություններն, ինչ բնակչության մյուս հատվածը:

գ) Եվրոպական երկրներում ինքնազբաղ սահմանափակ կարողություններով անձանց տոկոսային ցուցանիշն ավելի ցածր է, քան Վրաստանում:


դ) Վրաստանում վարձու աշխատանքով զբաղված սահմանափակ կարողություններով անձանց թիվը գերազանցում է, ինքնազբաղ սահմանափակ կարողություններով անձանց թվին:

Հրահանգ

Հաջորդականության սահմանում (№14)

Առաջադրանքում տրված թվարկացանկը դասավորեք նշված սկզբունքի համաձայն: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված վանդակներում: Ի նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն ընտրված պատասխանի համապատասխան թվանշանը: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

14. (1) Միենայում տրված է կոնֆլիկտի էսկալացիայի «պտուտահողմ»: Դասավորեք կոնֆլիկտի փուլերը, ըստ դրանց սաստկացման:



5. Ծայրահեղ դիրքորոշումների ձևավորում

4. Կոնֆլիկտի հրահրում

3. Դաշինքների ձևավորում

2. Տարաձայնություն

1. Հաղորդակցության խեղաթյուրում

Սկզբնական գործողություն

| | | | | |
|----|--|--|--|--|
| 4* | | | | |
|----|--|--|--|--|





* Աղյուսակում նշված է ճիշտ պատասխանը:

Հրահանգ

Համապատասխանության որոշում (N°15-17)

Առաջադրանքում երկու սյունակով տրված է տարբեր տեսակի թվարկացանկ: Որոշեք համապատասխանությունն այս երկու սյունակներում ներկայացված տեղեկատվության միջև: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:


15. (2) Համապատասխանեցրեք I սյունակում ներկայացված յուրաքանչյուր խորհրդանիշը II սյունակում ներկայացված համապատասխան կրոնին.

| I. Կրոնական խորհրդանիշներ | | II. Կրոններ |
|--|---|--|
| <p>ա) </p> | <p>ճ) </p> | <ol style="list-style-type: none"> 1. Դաոսականություն 2. Հինդուիզմ 3. Իսլամ 4. Հուդայականություն |
| <p>Ն) </p> | <p>Թ) </p> | |

16. (2) II սյունակում ներկայացված պատմաքաղաքական համատեքստերը համապատասխանեցրեք I սյունակում ներկայացված նշանաբաններին.

| I. Նշանաբաններ | II. Պատմաքաղաքական համատեքստեր |
|---|---|
| Տ) «Ո՛չ մի հարկ, առանց ներկայացուցչության» | 1. Գերմանական նացիոնալ-սոցիալիստական բանվորական կուսակցության նշանաբանը Երրորդ Ռայխի ժամանակաշրջանում |
| Ծ) «Ամբողջ իշխանությունը Սովետներին» | 2. Հակակոմունիստական նշանաբանը Սառը պատերազմի ժամանակաշրջանում |
| Ճ) «Մե՛կ ազգ, մե՛կ կայսրություն, մե՛կ առաջնորդ» | 3. Հարավսլավական պարտիզանների նշանաբանը Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ |
| Ծ) «Մա՛հ ֆաշիզմին, ազատություն՝ն ազգին» | 4. Ամերիկյան գաղութարարների |
| Չ) «Լավ է մեռած, քան Կարմիր» | հակաբրիտանական տրամադրությունը Ամերիկյան հեղափոխությունից առաջ |
| | 5. Բոլշևիկների նշանաբանը Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ |

17. (1) Քարտեզն արտացոլում է աշխարհի երկրներում մամուլի ազատության աստիճանը 2019 թվականի տվյալներով: II սյունակում ներկայացված ազատության աստիճանները համապատասխանեցրեք I սյունակում ներկայացված երկրներին.



| I. Երկրներ | II. Ազատության աստիճանը |
|--------------|-------------------------|
| ա) Կանադա | 1. Շատ բարձր |
| ծ) Թուրքիա | 2. Բարձր |
| ց) Ֆինլանդիա | 3. Միջին |
| զ) Իրան | 4. Ցածր |
| յ) Ուկրաինա | 5. Շատ ցածր |

Հրահանգ

Մխալի ուղղում (№18)

Առաջադրանքում տրված է տեքստ, որտեղ թույլ են տրված փաստացի սխալներ (տարեթիվ, տերմին, անուն և այլն): Բացահայտեք և ուղղեք դրանք: Բացահայտած սխալը և դրա ուղղած տարբերակը գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում (սխալը՝ I սյունակում, իսկ ուղղած տարբերակը՝ II սյունակում): Ի նկատի ունեցեք, որ յուրաքանչյուր բացահայտված սխալ, իր ուղղված տարբերակի հետ միասին, գնահատվում է 1 միավոր: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

18. (7) Ուշադիր ընթերցեք տեքստը, գտեք և ուղղեք սխալները.

Լիբերալ ժողովրդավարություն

Պատմության ընթացքում, տարբեր պետություններում կառավարման տարբեր ձևեր էին գործում: Այսօրվա դրությամբ տարածված է կառավարման ժողովրդավարական ձևը: «Ժողովրդավարություն» եզրույթը բխում է հին լատիներեն «դեմոկրատիա» բառից, ինչը ենթադրում է, որ կարևոր պետական որոշումները կայացնում են քաղաքացիների մեծամասնության կամքը նախատեսելով: Լիբերալ ժողովրդավարությունը կառավարման այն ձևն է, որտեղ պաշտպանված է անձի ազատությունը, ինչը նշանակում է, որ մեծամասնությունը չունի առանձին քաղաքացիների իրավունքներն անտեսելու իրավունք:

Լիբերալ ժողովրդավարությանը բնորոշ են պարբերական ընտրությունները, իշխանության բաշխումը, կուսակցական մրցակցությունը և պլանային տնտեսության պահանջարկների վրա կենտրոնացած մասնավոր ձեռնարկատիրությունը: Բացի այդ, լիբերալ ժողովրդավարության հիմնարար բնութագրիչներից մեկը խոսքի և արտահայտվելու ազատությունն է, ինչը քաղաքացիներին իրենց համար կարևոր հարցերի շուրջ բանավիճելու հնարավորություն է ընձեռում, որն էլ նպաստում է առաջընթացին և առաջխաղացմանը:

անցնել տեքստի երկրորդ էջին

Ժամանակակից լիբերալ ժողովրդավարությունը սկիզբ է առել XVII-XVIII դարերում Եվրոպայում գոյություն ունեցող ինտելեկտուալ շարժումից, որը կոչվում է Ռենեսանս: Այս ժամանակահատվածից է սկսվել կառավարման ձևերի վերստուգումը, կասկածի տակ առնվեցին կառավարման այն ժամանակվա տարածված ձևերը՝ Հանրապետությունն ու Արիստոկրատիան: Հենց եվրոպացի ինտելեկտուալները բարձացրեցին մարդու ազատության և հավասարության հարցը, ինչը հիմք դրեց ժամանակակից ժողովրդավարական կառավարմանը:

Նույն ժամանակահատվածում գործունեություն վարող Շառլ Լուի դը Մոնտեսքյոյի վաստակն է, օրինակ վերևում հիշատակված իշխանության բաշխման սկզբունքի մշակումը: Այս սկզբունքը ենթադրում է պետական իշխանության բաշխում երեք հետևյալ ճյուղերի՝ օրենսդրական, գործադիր և կառավարական: Թոմաս Հոբսի և Ջոն Լոկի աշխատություններից քաղաքական մտածողության մեջ ներմուծվեց «Քաղաքացիական վիճակ» հասկացությունը, որը նշանակում է մարդկանց կեցությունն առանց պետական իշխանության: Նշված հասկացությունը դարձավ արդարության, օրինականության և պետական իշխանության հարցերը նորովի ըմբռնելու անկյունաքարը:

Ընդհանուր առմամբ, գոյություն ունի երկու տեսակի ժողովրդավարական կառավարում՝ ուղղակի, ինչը պետական որոշումներին ժողովրդի անմիջական մասնակցություն է ենթադրում, և ներկայացուցչական, որտեղ քաղաքացիները իրենց ներկայացուցչությունների միջոցով իրականացնում են իշխանությունը: Թեև, այս վերջինս նույնպես կարող է ներառել անմիջական մասնակցության մեխանիզմներ, ինչպիսին է, օրինակ՝ մորատորիումը:

Հրահանգ

Միսայի ուղղում (№19)

Առաջադրանքում տրված է մեկ թեմայի հետ կապված երկու տեքստ: Երկու տեքստն էլ պարունակում են փաստացի սխալներ: Ձեր խնդիրն է վերլուծել տեքստերը, հայտնաբերել սխալները, և գնահատել տեքստերը նախապես տրված սխեմայով սահմանված չափանիշներով: Գնահատումը գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

19. (6) Առաջադրանքում ներկայացված է «Մարդու իրավունքները» թեմայով երկու տեքստ: Տեքստերը կարող են պարունակել փաստացի սխալներ: Ծանոթացեք տեքստերին, վերլուծեք դրանց բովանդակությունը և գնահատեք առաջարկված չափանիշների համաձայն:

I տեքստ.

Ժամանակակից հասարակության մեջ յուրաքանչյուր ոք ունի իրավունքներ, որոնք օգնում են նրան սեփական անձն իրացնելու գործում: Պետությունը պարտավոր է հարգանքով վերաբերվել և պաշտպանել յուրաքանչյուր մարդու իրավունքները, որոնք հաստատված են իրավական նորմերով:

Մարդու իրավունքները համընդհանուր են, ինչը նշանակում է, որ դրանք հավասարապես վերաբերում են աշխարհի բոլոր մարդկանց: Ելնելով նրանից, որ մարդը ծնված օրվանից տիրապետում է բոլոր այն իրավունքներին, որոնց համար բավական է ուղղակի մարդ լինելը, այդ պատճառով անհնար է առգրավել այդ իրավունքները կամ դադարեցնել դրանց գործողությունը: Սա մատնանշում է այս իրավունքների անձեռնմխելիության սկզբունքը:

Ժամանակագրական դասակարգման համաձայն առանձնացնում են մարդու իրավունքների երեք սերունդ, որոնցից առաջինը մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքներն են: Այս սերնդին դասվում են մարդու կյանքի, արժանապատվության և պատվի անձեռնմխելիության իրավունքները, ինչպես նաև խոսքի ազատությունը:

Միջազգային մակարդակով մարդու իրավունքների պաշտպանությանը ծառայում են ՄԱԿ-ի կողմից ընդունված մի շարք կոնվենցիաներ: Օրինակ, 1979 թվականին ընդունվեց Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, իսկ 1948 թվականին՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Միջազգային կոնվենցիան:

II տեքստ.

Ժողովրդավարական երկրում մարդու ինքնաիրացման համար անհրաժեշտ է պաշտպանել մարդու իրավունքները: Պետությունը պարտավոր է հարգանքով վերաբերվել յուրաքանչյուր մարդու իրավունքներին և իրավական պատասխանատվություն ստանձնել դրանց իրականացման համար:

Մարդու իրավունքների դասակարգման համար ընդունված է ժամանակագրական բաշխում երեք սերնդի: Առաջին սերնդի իրավունքներում դիտարկում են մարդու այն քաղաքացիական-քաղաքական իրավունքները, ինչպիսիք են ձայն տալու իրավունքը, արդար դատարանի իրավունքը, անձնական կյանքի անձեռնմխելիությունը և այլն: Երկրորդ սերնդի իրավունքները կոլեկտիվ բնույթ են կրում և նրանց հիմքն է համարվում համերաշխության գաղափարը:

Մարդու իրավունքները ունիվերսալ բնույթ են կրում և միաժամանակ, փոխկախվածության մեջ են, ինչը նշանակում է, որ բոլոր իրավունքները միասնության մեջ պայմանավորում են համակարգի հաշվեկշիռն ու դրանց իրականացման հնարավորությունը: Հարկ է նշել նաև, որ մարդու իրավունքները անօտարելի են:

Պետությունները միմյանց հետ համագործակցության հիման վրա ընդունում են կոնվենցիաներ, որոնց հիման վրա ստանձնում են պարտականություններ՝ կոնվենցիայով նախատեսված իրավունքները պաշտպանելու համար: Օրինակ, միջազգային մակարդակով, 1966 թվականին Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունվեց Երեխաների իրավունքների կոնվենցիան, որի հիման վրա բոլոր երկրները ստանձնեցին պարտականություն՝ հարգանքով վերաբերվել և ապահովել իրենց իրավասության ներքո գտվող յուրաքանչյուր երեխայի կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները, առանց որևէ խտրության:

Ծանոթացեք գնահատման սխեմային և երկու տեքստը գնահատեք տրված չափանիշների համաձայն: Գրեք համապատասխան միավոր գնահատման սխեմայի յուրաքանչյուր չափանիշի համար առանձին-առանձին:

| | I. Չափանիշներ | II. Առավելագույն միավոր | III. Միավորներ շնորհելու սկզբունք |
|----|---|-------------------------|--|
| A. | Մարդու իրավունքների սերունդներ | 3 | Յուրաքանչյուր ճիշտ <u>բացատրված</u> իրավունքների սերունդը՝ 1 միավոր |
| B. | Մարդու իրավունքների սկզբունքներ | 3 | Յուրաքանչյուր ճիշտ <u>անվանած</u> և <u>բացատրված</u> սկզբունքը՝ 1 միավոր |
| C. | Մարդու իրավունքների մասին ՄԱԿ-ի հիմնական կոնվենցիաներ | 4 | Յուրաքանչյուր ճիշտ <u>անվանած</u> և <u>թվագրած</u> կոնվենցիան՝ 1 միավոր |

Ձեր կողմից շնորհված միավորները գրեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում.

| | | A | B | C |
|------|---------------------|---|---|---|
| 19.1 | I տեքստի գնահատում | | | |
| 19.2 | II տեքստի գնահատում | | | |

[Վերադառնալ I տեքստին](#)

[Վերադառնալ II տեքստին](#)

Հրահանգ


Առաջադրանք՝ Բաց վերջավորությամբ (№ 20, 21.2, 21.3, 22, 23, 24, 25.4-25.7)

Առաջադրանքում տրված է հարց, որին կցված չեն ենթադրական պատասխաններ: Ուշադրությամբ կարդացեք առաջադրանքի պայմանը և հարցը: Պատասխանը պետք է լինի հարցին համարժեք և կոնկրետ: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Միավորների առավելագույն քանակը նշված է յուրաքանչյուր առաջադրանքի երկայնքով:

20. (4) Միևնան ոչ լիարժեք կերպով արտացոլում է միջազգային կազմակերպությունների մասին տեղեկատվությունը: Լրացրեք սխեմայի դատարկ վանդակները:

| Միջազգային կազմակերպություն | Հիմնադրման տարեթիվը | Շտաբ-բնակարանը | Վրաստանի կարգավիճակը նշված կազմակերպության մեջ |
|-----------------------------------|---------------------|----------------|--|
| Միավորված ազգերի կազմակերպություն | 20.1 | Նյու Յորք | Անդամակցում է 1992 թվականից |
| 20.2 | 1949 | Բրյուսել | Չի համարվում անդամ |
| Եվրոպայի Խորհուրդ | 1949 | 20.3 | Անդամակցում է 1999 թվականից |
| Եվրասիական տնտեսական միություն | 2015 | Մոսկվա | 20.4 |

21. (3) Ներկայացված է Աշխարհի քարտեզը, որին արտացոլում է 2019 թվականի տվյալները: Քարտեզի վերլուծության հիման վրա պատասխանեք հարցերին.



21.1 Ի՞նչ է արտացոլում ներկայացված քարտեզը:

- ա) Կանանց ֆիզիկական անվտանգությունը,
- ծ) Մարդկային զարգացման ինդեքսը,
- ց) Դատարանի ազատությունը,
- զ) Ալկոհոլի օգտագործումը:

21.2 Անվանեք երկու երկիր հետխորհրդային տարածքից, որտեղ քարտեզի տվյալների համաձայն ամենավատ դրությունն է:

21.3 Քարտեզի տվյալների կիրառմամբ որոշեք, թե ի՞նչ վիճակ է Վրաստանում և դատողություններ արեք այս երևույթը պայմանավորող պատճառների մասին:

22. (5) Առաջադրանքում տրված է դպրոցական նախագծի նպատակի, խնդիրների և իրականացման ուղիների ոչ լիարժեք տարբերակը: Դպրոցական նախագծի տրված հատվածին ավարտուն տեսք տալու համար առաջադրանքները կատարեք հետևյալ հաջորդականությամբ.

- I. Որոշեք և գրառեք I խնդիրը, ելնելով աղյուսակում տրված իրականացման ուղիների թվարկացանկից (*Առաջադրանք 22.2*)
- II. Գրեք իրականացման երեք տարբեր ուղի, որոնք Ձեր կարծիքով, նպաստում են աղյուսակում տրված II խնդրի կատարմանը (*Առաջադրանք 22.3*)
- III. Որոշեք և գրառեք նախագծի նպատակը, որին հնարավոր է հասնել նախագծի խնդիրների և դրանց իրականացման ուղիներից ելնելով: (*Առաջադրանք 22.1*)

| | |
|------|--|
| 22.1 | <p><u>Նախագծի նպատակը.</u> <i>(Գրեք նպատակը, որին հնարավոր է հասնել տրված խնդիրներից և իրականացման ուղիներից ելնելով)</i></p> |
| 22.2 | <p><u>Նախագծի I խնդիրը.</u> <i>(Որոշեք և գրեք կոնկրետ խնդիր, ելնելով I խնդրի իրականացման ուղիներից)</i></p> <p><u>Նախագծի II խնդիրը.</u> <i>Աշակերտների մոտ ձևավորել դրական տրամադրություն օրենքի գերակայության սկզբունքի նկատմամբ:</i></p> |
| 22.3 | <p><u>I խմբի իրականացման ուղիներ</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Անցկացնել դասախոսություն «Մարդու արժանապատվությունն ու մարդու իրավունքները» 2. Բարձր դասարանի աշակերտների հետ անցկացնել բանավեճ «Քաղաքացի և պետություն» թեմայով 3. Կազմակերպել աշակերտների կոնֆերանս «Իրավական պետության սկզբունքները» թեմայով <p><u>II խմբի իրականացման ուղիներ</u> <i>(Գրեք տրված խնդրի իրականացման երեք տարբեր ուղի)</i></p> <ol style="list-style-type: none"> 1. 2. 3. |

23. (3) Ծանոթացեք 1907 թվականին հրատարակված ֆրանսիական ամսագրի կազմին պատկերված պատկերազարդմանը և պատասխանեք հարցերին.



23.1 Անվանեք և բացատրեք դպրոցի հետ կապված ի՞նչ երևույթ է նկարագրված նկարում:

23.2 Բերեք այս երևույթի դեմ մեկ փաստարկ:

23.3 Դատողություններ արեք, որքանո՞վ արդիական է նման երևույթը Վրաստանի համար և ի՞նչ դեր է կատարում օրենսդրությունը այն կարգավորելու գործում:

24. (5) Ծանոթացեք տեքստին և կատարեք առաջադրանքը ստորև ներկայացված ցուցումների համապատասխան.

«Գոյություն ունեն նաև ուրիշներին օգուտ բերող շատ դրական գործողություններ և մարդկանց արդարացիորեն կարող են ստիպել կատարել դրանք. Այդպիսին է դատական նիստին ցուցմունք տալը, սեփական ավանդի ներդնումը հասարակական անվտանգության կամ ցանկացած այլ ընդհանուր գործում, որն անհրաժեշտ է այն հասարակության շահերի համար, որի հովանավորությունից նա օգտվում է: Բացի այդ, անհատական աջակցության որոշակի գործողություններ կատարելը, ինչպիսիք են եղբայրակցի կյանքը փրկելը կամ անպաշտպանի նկատմամբ չարագործությունը կանխելու նպատակով միջամտելը: Մարդուն արդարացիորեն կարող ենք ստիպել հասարակության առաջ պատասխան տալ այն գործողությունները չկատարելու համար, որոնց կատարումը ակնհայտորեն նրա պարտականությունն է: Մարդն ուրիշներին կարող է վնաս պատճառել ոչ միայն իր գործողություններով, այլ նաև իր անգործունեությամբ, և երկու դեպքում էլ արդարացի է ստիպել նրան պատասխան տալ մարդկանց վնաս պատճառելու համար»:

Ազատության մասին, Ջոն Ստյուարտ Միլ, 1806-1873 թթ.

24.1 Ելնելով տեքստից որոշեք և անվանեք բանավեճի թեման: Դատողություններ արեք տվյալ տեքստի հետ Ձեր ընտրած բանավեճի թեմայի համապատասխանության և արդիականության մասին:

24.2 A. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ընթացքում ծագած դիրքորոշումը պաշտպանելու համար:

B. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ընթացքում ծագած դիրքորոշումը հերքելու համար:

(Յուրաքանչյուր փաստարկ պետք է կրի էականորեն անկախ միտք)

25. (8) Վերլուծեք ներկայացված աղբյուրները և պատասխանեք հարցերին.

Աղբյուր N1

«Փոխադարձ կախվածությունը ժամանակակից աշխարհը բնորոշող կողմն է. մասնավորապես, տնտեսական ոլորտում՝ տարբեր գների միջև, տարբեր արդյունաբերությունների և տարբեր երկրների միջև, ավելի լայն հասարակության մեջ՝ տնտեսական և մշակութային գործունեության միջև, բարեգործական և հասարակական գործունեության միջև: Հասարակության կարգավորման հարցում՝ տնտեսական և քաղաքական կարգերի, տնտեսական և քաղաքական ազատությունների միջև: Միջազգային տեսանկյունից նույնպես, տնտեսական գործարքները հատվում են քաղաքական գործարքների հետ: Միջազգային առևտրի ազատությունը ներդաշնակ հարաբերություններ է հաստատում ազգերի միջև, որոնք տարբերվում են մշակույթով և ինստիտուցիաներով, այնպես ինչպես առևտրի ազատությունը երկրի ներսում՝ հաստատում է ներդաշնակ հարաբերություններ անհատների միջև, որոնք միմյանցից տարբերվում են հավատքով, տրամադրություններով և հետաքրքրություններով: Ազատ առևտրի աշխարհում, այնպես, ինչպես ազատ առևտուր ունեցող ցանկացած երկրում, գործարքներ կնքվում են մասնավոր ներկայացուցիչների՝ անհատների, բիզնես ձեռնարկատիրությունների, բարեգործական կազմակերպությունների միջև: Պայմանները, որոնցով կնքվում են ցանկացած գործարքներ, համաձայնեցված են գործարքին մասնակցող բոլոր կողմերի հետ: Գործարք չի կնքվում, քանի դեռ բոլոր կողմերը չեն համոզվում իրենց շահավետության մեջ: Արդյունքում, տեղի է ունենում տարբեր կողմերի շահերի ներդաշնակում: Կանոն է համարվում համագործակցությունը, այլ ոչ թե կոնֆլիկտը»:

Միլթոն Ֆրիդման «Ընտրության ազատություն», 1980 թվական

Աղբյուր N2

«Մեր սերունդը մոռացել է, որ մասնավոր սեփականության վրա հիմնված կարգ ու կանոնը ազատության ամենակարևոր երաշխիքն է: Իսկ դա այդպես է, միայն այն պատճառով, որ արտադրության միջոցների կառավարումը բաշխված է բազմաթիվ անկախորեն գործող մրցակից մարդկանց միջև, որոնք անձամբ են որոշում, թե ինչպես է պետք վարվել: Երբ արտադրության միջոցները միայն մեկի ձեռքում են, նույնիսկ եթե դա «հասարակությունն» է, որպես միասնական ամբողջականություն կամ բռնապետ, ով էլ իրականացնի այդ վերահսկողությունը, նա մեր վրա ունի լիարժեք իշխանություն: Այն, ինչ կոչվում է տնտեսական իշխանություն, կարող է դառնալ հարկադրանքի միջոց մասնավոր անձանց ձեռքում ևս, թեև այն երբեք չի տարածվի մարդկանց ամբողջ կեցության վրա: Սակայն, այն դեպքում, երբ տնտեսական իշխանությունը կենտրոնացված է, որպես քաղաքական իշխանության որոշակի զենք, ապա այն հաստատում է այն աստիճանի կախվածություն, որը դժվար թե տարբերվում է ստրկությունից»:

Ֆրիդրիխ Ավգյուստ Ֆոն Հայեկ, «Ճանապարհ դեպի ստրկություն», 1944 թվական

Աղբյուր N3

«Մրցակցության դրական արդյունքների կիրառմանը չի խանգարում պետության միջամտությունը որոշակի հարցերում: Օրինակ՝ աշխատանքային ժամերի սահմանումը և որոշ սանիտարական նորմերի հաստատումը, կենցաղային ապահովման բազմակողմանի աճող համակարգի արմատավորումը, հնարավոր է լիովին համապատասխանի մրցակցության կանոնների պահպանմանը: Սակայն, կան նաև այնպիսի ոլորտներ, որտեղ մրցակցությունն անհնար է: Օրինակ, անտառահատման վտանգավոր հետևանքները կամ արտադրության արտանետումների հետ կապված գործոնները չեն կարող սահմանափակվել միայն մասնավոր սեփականատիրոջ իրավունքների դիտարկմամբ: Սակայն այն, որ կառավարության հրահանգները պետք է կիրառենք այնտեղ, որտեղ մրցակցությունը կատարյալ չէ, բոլորովին էլ չի վկայում այն մասին, որ մենք պետք է ճնշենք մրցակցությունն այնտեղ, որտեղ հնարավոր է այն իրագործել: Ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորության սահմաններում կդարձնեն մրցակցությունն արդյունավետ, ինչպիսիք են կեղծումից և խարդախությունից պաշտպանությունը, մենաշնորհների կանխարգելումը, այն խնդիրներն են, որոնց լուծումը ստեղծում է կառավարական գործունեության լայն և անտարակույս ասպարեզ»:

Ֆրիդրիխ Ավգյուստ Ֆոն Հայեկ, «Ճանապարհ դեպի ստրկություն», 1944 թվական

25.1 Ըստ Միլթոն Ֆրիդմանի տեքստի՝

- Տ) Քաղաքականության և տնտեսության ոլորտները իրարից սահմանազատված ոլորտներ են:
- Ծ) Տնտեսական հարաբերություններում հնարավոր չէ իրականացնել գործարք, եթե կողմերը միմյանցից տարբերվում են հավատով, տրամադրություններով և հետաքրքրություններով:
- Ճ) Միջազգային առևտրում, որտեղ հատվում են պետությունների տնտեսական շահերը, կոնֆլիկտն անխուսափելի է:
- Թ) Ազատ առևտուրը նպաստում է կոոպերացիային, ինչպես երկրի ներսում, այնպես տարբեր երկրների միջև:

25.2 N2 աղբյուրի համաձայն՝

- ս) Կենտրոնացված տնտեսական համակարգը քաղաքական իշխանության զենքն է, որը վտանգ է ստեղծում մարդու ազատությանը:
- ծ) Ելնելով նրանից, որ տնտեսական գործունեությունը կապված է ռիսկերի հետ, գերադասելի է, որ այն վերահսկի պետությունը:
- ժ) Ելնելով նրանից, որ մարդիկ նույն միջավայրում են ապրում և ձգտում են ընդհանուր նպատակին, նշանակություն չունի նրանք անհատականորեն են ներգրավված տնտեսական գործունեությանը, թե դա իրականացնում է պետությունը:
- զ) Երկրում բռնապետություն չարմատավորվելու նպատակով, արտադրության միջոցներին առանձին քաղաքացիների փոխարեն պետք է տիրապետի ամբողջ հասարակությունը՝ որպես միասնություն:

25.3 N3 աղբյուրի համաձայն՝

- ս) Պետության գլխավոր խնդիրը մասնավոր սեփականատերերի իրավունքները պաշտպանելն է, տնտեսության աճն ապահովելու նպատակով:
- ծ) Կատարյալ տնտեսությունն արմատավորելու համար, պետությունը պետք է կարողանա հաստատել ընդհանուր սեփականության վերահսկողություն:
- ց) Որոշ տնտեսական գործունեություններ պետությունը մասամբ կարող է վերահսկել, չխախտելով մրցակցության կանոնները:
- ղ) Այն խնդրահարույց հարցերը, ինչպիսին է անտառահատման և արտադրության արտանետումների հաղթահարումն առավել արդյունավետորեն հնարավոր է լուծել այն դեպքում, եթե այդ մասին հոգ տանեն մասնավոր սեփականատերերը:

- 25.4** N3 աղբյուրում Հայեկը խոսում է մրցակցության նշանակության մասին: Անվանեք երկու դրական երևույթ, որը երկրի տնտեսության մեջ ուղեկցվում է մրցակցության առկայության հետ:
- 25.5** Ինչպես եք կարծում, ինչո՞ւ կարող է արմատավորել «ստրկությանը» համանման կախվածություններ տնտեսական իշխանության կենտրոնացումը:
- 25.6** Ի՞նչ բացասական հետևանք կարող է լինել, եթե պետությունն ընդհանրապես չկարգավորի քաղաքացիների տնտեսական գործունեությունը:
- 25.7** Նախատեսելով Վրաստանի նորագույն պատմությունը, ի՞նչ տնտեսաքաղաքական ոիսկերի հետ է կապված միջազգային առևտուրը: Քննարկեք այդ ոիսկերը հաղթահարելու ուղիներից մեկը: